Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

74/4170/ 21 ապրիլի 2012 շաբաթ

ISSN 1829-2224

## Ա

## Եթե անկեղծ եք

Ես չեմ վախենում Սերժ Սարգսյանի, չեմ վախենում Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանությունից: Ես ոչ մի սարսափելի բան չեմ տեսնում, եթե նախագահ դառնան Րաֆֆի Հովհաննիսյանը, Գագիկ Ծառուկյանը կամ Վարդան Օսկանյանը: Նրանք, իհարկե, տարբեր ձեւով են ղեկավարելու, բայց բանական մարդիկ լինելով, պաթոլոգիկ հակումներ չունենալով՝ կփորձեն պահպանել ներքին կայունությունն ու համերաշխությունը: Միակ մարդը, որի իշխանությունից ես վախենում եմ, Ռոբերտ Քոչարյանն է: Վախենում եմ ոչ անձամբ ինձ համար. պարզապես այդ նախագահի օրոք տեղի է ունեցել առնվազն երկու իրադարձություն՝ Հոկտեմբերի 27 եւ Մարտի 1, որոնք երկու անգամ մի քանի տարով ետ գցեցին մեր երկրի զարգացումը: Վերը թվարկած գործիչներից ոչ մեկը դա թույլ չէր տա: Առաջին նախագահը կարող է անկեղծորեն վիրավորվել, երբ ինչ-որ մեկն իր նման չի մտածում, ներկայիս նախագահն այդպիսի մարդուն կփորձի համոզել իր ճշմարտացիության մեջ: Երկրորդ նախագահը երբ տեսնում է, որ իր հետ համաձայն չեն, զուտ բնազդորեն ձեռքը տանում է դեպի ատրճանակը: Նույն ռեժիմի պայմաններում կա բնավորությունների տարբերություն, եւ Ռոբերտ Քոչարյանի բնավորության առանձնահատկությունները կարող են երկրի համար վտանգավոր լինել: Եթե իմ հարգարժան բարեկամները ՀԱԿ-ից կամա թե ակամա դրան նպաստում են, ապա, ինձ թվում է, սխալ են վարվում:

Երկխոսության մասին: «Ընդդիմադիր կողմը (ՀԱԿ-ը՝ այսինքն-Ա. Ա.) շատ դաժան պայքարից հետո երկխոսության նստեց՝ սկսելով մի այնպիսի նախադեպ, որ պիտի փայփայվի, գուրգուրվի, դառնա ընդդիմության եւ իշխանության Աստվածաշունչը քաղաքական, բայց էլի գտնվեցին մարդիկ, անգամ մի թերթ, որ այդ երկխոսության հիմնական ջատագովն էր, համարում էր, թե այդ երկխոսությունը սխալ է եղել»: Եթե «մի թերթը» «Առավոտն» է, ապա անձամբ գտնում եմ, որ երկխոսությունը շատ էլ ճիշտ է եղել: (Բնականաբար, մեր թերթում նաեւ այլ կարծիքներ են հրապարակվել): Ավելին՝ ես կողմ էի, որ երկխոսությունը շարունակվեր ու «չլռվեր» պիտբուլների դնչկալների խնդրի վրա. այդ ընթացքում հնարավոր կլիներ իշխանություններից կորզել 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգը, ընտրական տեղամասերի պարտադիր նկարահանումը եւ շատ այլ բաներ, որոնք հիմա կհեշտացնեին ընդդիմության գործը:

Միացյալ շտաբի մասին: Փառք ու պատիվ ՀԱԿ-ին, ԲՀԿ-ին եւ ՀՅԴ-ին, որ կարողացան, մի կողմ թողնելով բոլոր տարաձայնությունները, այդ շտաբը ստեղծել: Առաջին նախագահի հետ միասին չեմ հասկանում, թե ինչու «Ժառանգությունը» չի մասնակցում տվյալ կառույցի աշխատանքներին: Աստված տա՝ այդ շտաբն իր առաքելությունը կատարի ու գոնե որոշ չափով կասեցնի ընտրախախտումները: Իմ առարկությունները վերաբերում են ոչ թե շտաբին, այլ ՀԱԿ-ԲՀԿ հարաբերություններին: Չի կարող պատահել, որ 10 նախարար ունեցող քաղաքական ուժը «գող-ավազակ» է, իսկ 3 նախարար ունեցողը՝ սրբերի հավաքածու: Չի կարող պատահել, որ երկու օլիգարխները բութ եւ անգրագետ լինեն, իսկ մեկը Հարվարդի մակարդակ ունենա: Ինչո՞ւ Գագիկ Ծառուկյանի հետ մեծամասնականով ոչ մի ընդդիմադիր չի համարձակվել առաջադրվել, նրան բանավեճերի հրավիրել եւ այլն: Եթե իսկապես պայքարում եք համակարգի դեմ, ապա պայքարեք ամբողջապես, ոչ թե հատվածաբար: Եթե խաղեր եք տալիս՝ ուրիշ հարց:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# «Երեւի եղանակն էլ է հա՞ կոալիցիայի անդամ»

Երեկ «Ժառանգության» թեկնածուների Գյումրի ոտք դնելուն պես այնպիսի մի հորդառատ անձրեւ սկսվեց, որ ներկաներին մի պահ թվաց, թե հնդկական ֆիլմում են հայտնվել: ՀՀ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը թեեւ իրականում մի լավ նեղսրտեց, որ եղանակի պատճառով իրենց մեծամասամբ ունկնդրում էին լրագրողները, սակայն կատակի տալով՝ հարցրեց. «Չգիտեմ, երեւի եղանակն էլ է հա՞ կոալիցիայի անդամ այս ընթացքում»: Իսկ «Ժառանգության» հիմնադիր Րաֆֆի Հովհաննիսյանը, Համո Սահյանի հայտնի խոսքերը վերափոխելով «Անձրեւն ո՞ւմ շունն է» արտահայտության՝ ոտքից մինչեւ գլուխ թրջվեց: Ու երբ «Ժառանգության» առաջնորդի առողջությամբ անհանգստացած գյումրեցի մի կին փորձեց անձրեւանոց պահել նրա գլխին, վերջինս կտրականապես հրաժարվեց՝ պատճառաբանելով. «Պետք չէ, շնորհակալ եմ, դուք խոսում եք մարդու հետ, ով համեստաբար 15 օր հացադուլ է արել Ազատության հրապարակում: Մեզ համար անձրեւը նորություն չէ, մեզ համար մեռոն է, եւ իմ կարծիքով՝ Հայաստանի ծառա պատգամավորը, նախարարը, մարզպետը, վարչապետը, նախագահը 5 տարի պետք է լինի ժողովրդի հետ, ժողովրդի նման պետք է ապրի՝ առանց անձրեւանոցի, եթե պետք է՝ առանց ապաստանի, առանց դոմիկի, մինչեւ որ ժողովրդի խնդիրը լուծվի»:

Կարդացեք նաեւ՝ էջ 3:





## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Իրականությանը նայել բաց աչքերով

«Պետք չէ վախենալ վատը տեսնելիս, ինչպես նաեւ պետք չէ վարդագույն ակնոցով նայել իրականությանը, ընդհակառակը՝ պետք է իրականությանը նայել բաց աչքերով, անգամ՝ լայն բացված: Բաց աչքերով տեսնող մարդն է ի վիճակի գնալ փոփոխությունների, եւ լավ է, որ դա արդեն շատերն են գիտակցում»,- «Առավոտի» հետ զրույցում կարծիք հայտնեց ՀՀԿ համամասնական ցուցակի 26-րդ հորիզոնականում գտնվող պատգամավորության թեկնածու Մարգարիտ Եսայանը:

Հարցազրույցը կարդացեք էջ 2:

### Ծառուկյանը չի կիսում Օսկանյանի կարծիքը

«Մենք հո տուն-տունիկ չե՞նք խաղում, այս քարոզարշավի ժամանակ ամենքը խոսում է իր մտածելակերպին եւ պատկերացումներին համապատասխան ու արտահայտում իր անձնական կարծիքը»,- երեկ պատասխանելով լրագրողներից մեկի հարցին՝ վերջին օրերին ԲՀԿ համամասնական ցուցակի երկրորդ համարը զբաղեցնող Վարդան Օսկանյանն անընդհատ քննադատության է ենթարկում իշխանություններին, Դուք կիսո՞ւմ եք նրա կարծիքը, ասաց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանը: Իշխանություններին ուղղված Վարդան Օսկանյանի քննադատությունն, ըստ Ծառուկյանի, նրա անձնական կարծիքն է:

Կարդացեք էջ**D**3:

### «Տրակտորների հարցը» միասնական շտաբում կքննարկվի

ԲՀԿ առաջնորդը խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում, ապրիլի 18-ին Մարալիկում, իսկ երեկ՝ Վայոց ձորի մարզում տրակտորներ է նվիրել: Ի պատասխան Aravot.am-ի հարցին, թե՝ արդյոք ՀՅԴ, ԲՀԿ եւ ՀԱԿ միասնական շտաբում, որն, ի վերջո, որոշակի խմբագրմամբ, բայց ընդունել է քարոզարշավի շրջանակներում բարեգործություն անելու անթույլատրելիության մասին դրույթը, հնարավո՞ր է, որ հարց բարձրացվի ու քննարկման առարկա դառնա ԲՀԿ-ի կողմից շարունակական նվիրատվությունների խնդիրը, ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանն ասաց. «Իհարկե, հնարավոր է, եւ, այո, կանդրադառնանք: Քաղաքական ուժերը պետք է բերեն դիտարկումներ, եւ շտաբի ու մեր խնդիրներից մեկն էլ հենց այն է, որ ընտրական նպատակներով կատարվող բարեգործությունը չպետք է թույլատրվի: Եթե դա բարեգործություն է՝ ընտրական նպատակներով, այո, պետք է քննարկման առարկա դառնա»:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Երկուշաբթի, ժամը 12-ին, «Փաստարկ» մամուլի ակումբի հյուրն է թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը:

### Եղանակ

Երեւան + 7 + 23, Շիրակ - 1 + 17, Կոտայք - 1 + 17, Գեղարքունիք - 1 + 17, Լոռի + 3 + 19, Տավուշ + 7 + 21, Արագածոտն լեռներ - 1 + 17, Արագածոտն նախալեռն. + 5 + 22, Արարատ + 5 + 23, Արմավիր + 5 + 23, Վայոց Ձոր լեռներ - 1 + 17, Վայոց Ձոր նախալեռն. + 5 + 23 , Սյունիքի հովիտներ + 9 + 19

## Դեմկուսը Գավառում էր

Երեկ Գավառի բնակչության հետ հանդիպեցին Հայաստանի Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները: Գավառի կենտրոնական հրապարակում ՀԴԿ ներկայացուցիչ Լենսեր Աղալովյանը խոստովանեց, որ իր տրամադրությունն ընկավ, երբ իմացավ, թե ինչ վիճակում է այսօր գտնվում գավառցին: «Մեր հանրապետությունում այսօր ստեղծված է կրիտիկական իրավիճակ, եւ վտանգ կա, որ դրանից այն կողմ մենք հանրապետություն չենք ունենա: Առաջին հերթին դա կապվում է աշխատատեղերի բացակայության հետ: Եվ այն էլ ծնում է արտագաղթ, որին անվանում են սպիտակ ջարդ» Դեմկուսի նախագահ Արամ Սարգսյանի ելույթի հիմնական առանցքը սոցիալական հարցերն էին: «Այն, ինչ այս հիանալի շրջանը եւ քաղաքը՝ Գավառը, ուներ՝ ձեռնարկությունները, հիմնարկները, կանգնած են եւ չեն աշխատեցնում, պետք է ազգայնացվի: Ես սա ասում եմ ամենայն պատասխանատվությամբ, պետք է ազգայնացվի, որպեսզի կարողանա պետությունը նորից վերագործարկել, որպեսզի ամեն մեկն աշխատանք գտնի այստեղ»,- ասաց Արամ Սարգսյանը:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

## Կոմկուսը՝ Կապանում

Երեկ Կապանում Կոմունիստական կուսակցության նախատեսած նախընտրական այցը մոտ մեկ ժամ ուշացավ: Ուշացումով մարզկենտրոն հասած կուսակցության ներկայացուցիչները նշեցին, որ իրենք ուշացել էին, քանի որ Երեւանից Կապան գալիս մայրուղու մի հատվածը փակված էր՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն էր քարոզչություն անում, եւ նրանց 30-35 րոպե թույլ չէին տալիս երթեւեկել այդ հատվածով: Կապանի մշակույթի տան հրապարակում մոտ վեց տասնյակի հազիվ էր հասնում հավաքվածների թիվը, որոնց առջեւ էլ իրենց ծրագրերի եւ մեր երկրում տիրող վատ իրավիճակի մասին խոսեց Ռուբեն Թովմասյանը:

Նա անդրադարձավ կոմունիստների ղեկավարման տարիներին բնակիչներին անվճար բնակարաններով ապահովելու, երկրում արդյունաբերական բազմաթիվ կառույցների գործունեության, ապրանքների ցածր գների հարցերին, եւ այն ամենին, ինչ այսօրվա պայմաններում բացակայում է երկրում:

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

# Խոսքի ազատությունը երբեք չի նշանակել խոսքի անարխիա

## Համոզված է ԱԺ պատգամավորի թեկնածու Մարգարիտ Եսայանը



- Նախընտրական քարոզչության առաջին տասն օրերն անցան, ի՞նչ տպավորություններ ունեք:

- Նախընտրական քարոզարշավը առայժմ ընթանում է բնականոն հունով, հուսամ՝ այդպես էլ կավարտվի, եւ չեն լինի ընդգծված առճակատումներ: Մրցամարտի ելած քաղաքական ուժերից յուրաքանչյուրը փորձում է ինքնացուցադրվել, եւ դա նորմալ է, սակայն, ցավոք, ոմանք իրենց ու իրենց ծրագրերը ներկայացնելու փոխարեն՝ մրցակիցներին են «ներկայացնում» հնարավոր եւ անհնար դրսեւորումներով՝ օգտվելով սեւ քարոզչության տեխնոլոգիաներից: Առայժմ միայն մեկ-երկու քաղաքական ուժեր են քարոզչության առանցքում պահում մինչ այժմ կատարած գործերը, չկատարածների մասին բացատրություններ տալիս եւ խոստանում ընտրվելով՝ անել ավելին: Թերեւս սա պետք է լինի նախընտրական տրամաբանության ելակետը: Ցավոք, ոչ բոլորն են առաջնորդվում այս տրամաբանությամբ եւ իրենց թիվ մեկ խնդիրն են դարձրել մյուսներին հերքելը, հայհոյելը, բառախեղդ անելը: Անկեղծ ասած՝ այս ամենի մեջ իմ հոգսը ՀՀ քաղաքացին է, շարքային ընտրողը, որ գնում է հանդիպման՝ լսելու, թե իրեն ինչ են ասելու, ինչպես են բացատրելու իր երեկվա ու այսօրվա կյանքը, ինչ են ապագայի համար ծրագրում, փոխարենը լսում է ինքնագովազդ եւ այլոց հակագովազդ: Քանի դեռ փոխադարձ անհանդուրժողականությունը չի վերացել, մենք ականատես կլինենք արհեստականորեն ձեւավորվող սրացումների, որոնք անհրաժեշտ են նրանց, ովքեր համոզված չեն, որ բավարար ձայներ կստանան: Իսկ այսօր իշխող քաղաքական ուժին՝ Հանրապետականին, արհեստական սրացումները բոլորովին պետք չեն, քանի որ, ուզենք թե չուզենք, ընտրության պատասխանատվությունը հենց այդ ուժի վրա է:

- Արդեն լուրեր կան, որ Հանրապետական կուսակցության ներկայացուցիչները բռնությունների են դիմել: Սոցհարցումների համաձայն՝ ՀՀԿ-ն առաջատար է: Եթե այդպես է, ինչո՞ւ է առաջատարը դիմում բիրտ մեթոդների:

- Քանի դեռ լուրերը չեն հաստատվել եւ չեն ապացուցվել օրենքի պահանջներին համապատասխան, եկեք ձեռնպահ մնանք այլոց ջրաղացին ջուր լցնելուց: Լրագրող աշխատածս տարիներին, դժբախտաբար, ականատես եղել եմ, թե որոշ «պատմական դրվագներ» ինչպես են բեմադրվում եւ ինչպես են ոմանք հայտնվում «զոհի» կերպարում՝ հետագայում «լուսապսակով» ներկայանալու համար: Դուք եք հաստատում, որ սոցհարցումներով ՀՀԿ-ն առաջատար է: Ուրեմն՝ նաեւ բնական է, որ ավելի շատ ՀՀԿ-ից են ոմանք «մրսում»:

- Ընտրապայքարին մասնակից ուժերի կարգախոսներում ընդգծվում է երկու բառ՝ հավատա, վստահիր: Ի՞նչ է սա, պարզ զուգադիպությո՞ւն, վստահության եւ հավատի պակասի անուղղակի հավաստո՞ւմ, ի՞նչ...

- Հավատի եւ վստահության պակաս, այո, մենք այսօր ունենք, ինչո՞ւ թաքցնել եւ ումի՞ց: Բոլորս էլ ապրում ենք միեւնույն իրականությունում եւ գիտակցում ենք, որ, այո, կա հավատի եւ վստահության պակաս, եւ հենց այդ գիտակցությունն է ՀՀԿ-ին եւ բոլոր քաղաքական ուժերին պարտադրում խոսել առաջին հերթին հավատի եւ վստահության վերականգնման անհրաժեշտության մասին: Եվ այդ անկեղծությունը պետք է միայն ողջունել: Պետք չէ վախենալ վատը տեսնելիս, պետք չէ նաեւ վարդագույն ակնոցով նայել իրականությանը, ընդհակառակը՝ պետք է իրականությանը նայել շիտակ, անկողմնակալ, բաց աչքերով, անգամ՝ լայն բացված: Բաց աչքերով տեսնող մարդն է ի վիճակի գնալ փոփոխությունների, եւ լավ է, որ դա արդեն շատերն են գիտակցում:

- ԱԺ պատգամավոր դառնալուց հետո ո՞րն է լինելու Ձեր առաջին քայլը:

- ԱԺ պատգամավոր դառնալուց հետո իմ բոլոր քայլերը լինելու են առաջին, համենայնդեպս՝ առաջին տարում, քանի որ, որքան էլ ասենք, թե մենք՝ լրագրողներս, քաղաքականության եւ քաղաքական դաշտի մասին գիտենք ամեն ինչ կամ՝ գրեթե ամեն ինչ, եւ որքան էլ դա ճշմարիտ է, միեւնույն է՝ այդպես չէ: Իրականում սա ինձ համար նոր դաշտ է, եւ ես շատ բան ունեմ սովորելու, բայց, հատուկ շեշտեմ, ես գիտեմ, թե որտեղից եմ գնում եւ ուր եմ գնում: Իսկ մարդը, ով ունի անցյալ, կարող է ներկան եւ ապագան կառուցել ըստ արժանվույն:

- Կանանց եւ հատկապես կին լրագրողների ներկայությունը խորհրդարանում, բացի ԱԺ-ն «գեղեցկացնելուց», ուրիշ ի՞նչ փոփոխությունների է բերելու:

- Ասեմ՝ ինչ չի փոխվի. կմնամ միշտ հասանելի իմ ընկերների, ընտրողների եւ բոլորի համար, ովքեր իմ օգնության կարիքը կզգան, չի փոխվելու իմ հեռախոսահամարը, չեն փոխվելու իմ ընկերները, եւ չեն փոխվելու իմ սկզբունքները, իսկ մնացածը՝ կապրենք, կտեսնենք:

- Ինչպե՞ս եք վերաբերվում այն հանգամանքին, որ բավականին մեծ թվով լրագրողներ են պատգամավոր դառնալու հայտ ներկայացրել:

- Միայն դրական, քանի որ մենք՝ լրագրողներս, ընդհանրապես շատ լավ «ժողովուրդ ենք», եւ եթե հնարավորություն ունենանք մեր ներուժը գործածել հանուն դրական փոփոխությունների, շահեկան կլինի բոլորի համար: Մյուս կողմից՝ լրագրության մի նորօրյա տեսակ կա, որ երբեք չեմ ընդունել եւ չեմ ընդունի երբեւէ՝ եթե լրագրողը ունի հնարավորություն տեղեկություններ տարածելու եւ իր կարծիքը տիրաժավորված ներկայացնելու, դա նրան ամենեւին իրավունք չի տալիս չարաշահել այդ հնարավորությունը: Խոսքի ազատությունը երբեք եւ ոչ մի դարաշրջանում չի նշանակել խոսքի անարխիա:

Զրույցը վարեց ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

# «Սերժ Սարգսյանը ծոծրակը կտեսնի, նախագահի աթոռն այլեւս չի տեսնի»

## ՀԱԿ հանրահավաքում հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը

Երեկ ՀԱԿ հանրահավաքում Կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը պատմեց, որ տարիներ առաջ Մեղրիի ճանապարհին Սամվել Ալեքսանյանին տեսել է, թե ինչպես է կամրջի վրայով պարկերով շաքարավազ կրում՝ մեջքի վրա դրած: Նրա խոսքերով՝ կրողներ շատ կային, բայց նա բոլորին ճանապարհից հեռացրել է ու մնացել մենաշնորհատեր:

ՀԱԿ առաջնորդը ներկայացրեց, թե ինչպես է Ռոբերտ Քոչարյանը կատարել Ղարաբաղի հարցում մեծագույն սխալը եւ այն դուրս հանել բանակցող կողմ լինելուց: Դրանում, ըստ ՀԱԿ առաջնորդի, մեղավոր է միայն Ռոբերտ Քոչարյանը: Թեեւ Սերժ Սարգսյանն էլ պաշտպանության նախարար էր եւ մեղավոր էր միայն իր մասով, բայց որոշողը Ռոբերտ Քոչարյանն է եղել. «Նա ասաց՝ ես Ղարաբաղի նախագահն էլ եմ եղել, ես կներկայացնեմ եւ Ղարաբաղը, եւ Հայաստանը, պետք չի, որ Ղարաբաղը մասնակցի բանակցություններին: Այնպիսի մի նվեր արեց ադրբեջանցիներին եւ միջազգային հանրությանը, այնքան միամիտ էր, որ չկարողացավ դա ծախել՝ ձրի տվեց, էժան՝ կոպեկներով, ինչ է թե՝ միջազգային հանրությունը կասեր՝ տեսեք, ինչ տղա է, լայնախոհ, ուզում է լուծել Ղարաբաղի հարցը»: Սա լսելուն պես՝



Ազատության հրապարակում հավաքվածները տարաբնույթ որակումներ էին տալիս Ռոբերտ Քոչարյանին՝ նրան անվանելով «թուրք»: Այս հարցում արդարացնելով Սերժ Սարգսյանին՝ Տեր-Պետրոսյանը նշեց, որ ինքն արդար մարդ է եւ չի ուզում ուրիշի մեղքերը բարդել նրա վրա. «Սերժ Սարգսյանի մեղքերն այնքան շատ են, որ նոր մեղք ավելացնելու կարիք չկա»:

Լեւոն Տեր-Պետրոսյանը խոստացավ, որ երբ մտնեն խորհրդարան ու մեծամասնություն կազմեն, առաջին իսկ նիստին բարձրացնելու են Սերժ Սարգսյանի պաշտոնանկության հարցը. «Եթե մեծամասնություն չենք կազմում, բայց մեր կողքին լինում են ուժեղ ընդդիմադիր խմբակցություններ, մենք նորից բարձրացնում ենք այդ հարցը: Եթե դա էլ չի լինում, նախագահական ընտրությունները հեռու չեն, մենք խորհրդարանը դարձնելու ենք պլացդարմ, տրամպլին, որ հարցը լուծենք նախագահական ընտրություններին»: ՀԱԿ առաջնորդը խոստացավ նաեւ, որ գիշեր-ցերեկ ամեն նախարարից, վարչապետից, նախագահից սկսած՝ հաշիվ են պահանջելու. «Լինի դա ոստիկանապետը, դատախազը՝ խորհրդարանից դուրս չեն գալու, գիշեր-ցերեկ լինելու են մեր հարցերի տարափի տակ»:

Հավաքվածներին ամենաշատը ոգեւորեց Տեր-Պետրոսյանի այն դիտարկումը, որ իշխանությունը պետք է փոփոխական լինի, նախագահը պետք է երկար չղեկավարի, նման սահմանափակումներ կան ամբողջ աշխարհում. «Ամենալավ, ամենասուրբ իշխանությունն անգամ եթե երկար ժամանակ մնում է իշխանությունում, նա լավագույն դեպքում երկիրը տանում է լճացման, վատագույն դեպքում՝ բռնապետության: Այդպես է ամբողջ աշխարհում: Իշխանությունը պետք է փոխվի»: Նա վստահեցնում էր, որ ուզում են իրենց ձայն տան միայն այն բանի համար, որ իշխանությունը վերադարձնեն ժողովրդին. «Կկատարվեն մեր խոստումները՝ շատ լավ, չեն կատարվի՝ կտաք մեր վզակոթին, կքշեք իշխանությունից. ահա սրա համար ենք ուզում գալ իշխանության: Մեզ վռնդելու իրավունք տալու համար: Ժողովուրդը շատ լավ չի հասկանում, որ խորհրդարանական ընտրությունները շատ ավելի կարեւոր են, քան նախագահական ընտրությունները, որովհետեւ եթե խորհրդարանը իշխանությունների գրպանում չլիներ՝ Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, նրանք երբեք նախագահ չէին ընտրվի: Եթե խորհրդարանը դարձնում եք հակակշիռ՝ Սերժ Սարգսյանը ծոծրակը կտեսնի, նախագահի աթոռն այլեւս չի տեսնի: «Ոչ մի ձայն հանցավոր ռեժիմին» կարգախոսը ձայն բարբառո հանապատի չի մնալու, դուք պետք է այնպես անեք, որ Սերժ Սարգսյանը, բացելով քվեատուփը, մի քվեաթերթիկ անգամ իր անունով չտեսնի: Դուք ինձնից անընդհատ պահանջում էիք՝ Հիմա, մայիսի 6-ը այդ հիմա-ն է, հիմա-ն եկել է, դե արեք այն, ինչ ինձնից պահանջում էիք: Եթե ձայն տաք ՀՀԿ-ին ու Սերժ Սարգսյանին, դառնում եք սեփական երկրի կործանման միջոցը»:

Հ. ՁԵԲԵՋՅԱՆ

Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 21.04.2012

# «Ժառանգությունը» երբեք չի մտնելու ուրիշների խաղի մեջ»

## Երեկ Գյումրիում հայտարարեց կուսակցության նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանը



Ըստ նրա՝ բավական է Մասիսի կենացը խմելով ատրել, անհրաժեշտ է այս քաղաքը եւս ազատագրել վանդալիզմից: Խոսելով երկրաշարժի հետեւանքների ու մինչեւ այսօր «դոմիկների» հույսին մնացած մարդկանց մասին՝ Րաֆֆի Հովհաննիսյանը ցավով նշեց, որ հայոց իշխանությունը՝ բոլոր նախագահությունների օրոք, այս քաղաքի հարցը չի լուծել: «Սա նախընտրական ճառ չէ, սա իմ պահանջն է. «Ժառանգության» կյանքի ու մահի գնով այս հարցը պետք է լուծենք բոլորի համար, սա արդեն պատվի խնդիր է, եւ անձրեւ է, թե ձյուն է, թե աթոռակռիվ է՝ կապ չունի, հայ մարդը սեփական հայրենիքում, ոչ թե սովետի կամ Օսմանյան կայսրության, իր երկրի, իր տանիքի տերը պետք է լինի»,- ասաց Րաֆֆի Հովհաննիսյանը: Նա նաեւ շեշտեց՝ եթե Գյումրիում, Վանաձորում, Նալբանդում կա թեկուզեւ մի ընտանիք, որը մնացել է առանց տանիքի, ուրեմն իր կուսակցության բոլոր անդամները նրանց պես պետք է ապրեն: Նա քննադատեց նաեւ շվայտ կյանքով, թիկնապահներով, ջիպերով, պատվիրակություններով ապրող նախագահին, վարչապետին նախարարներին: «Ի վերջո հայ մարդը իր միջից օտարը պետք է հանի եւ ասի՝ սա իմ տանիքն է, սա իմ դոմիկն է, եւ քանի դեռ մի դոմիկ կա Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանի մեծամասնությունը՝ կառավարությունը, վարչապետարանը եւ նախագահությունը, իրավունք չունի նորմալ, հանգիստ կյանք ապրել 5 աստղանի հյուրանոցներում: Ուզո՞ւմ եք 5 աստղանի հյուրանոց քվեարկել, դա արեք, եւ հետո հաշվետվության հրավիրեք հենց այս հրապարակում, այս անձրեւի տակ, բայց եթե դուք ուզում եք մի փոքր համեստ մեծամասնություն, համեստ իշխանություն, համեստ կառավարություն եւ նախագահություն, ուրեմն դուք պիտի ասեք՝ «Ժառանգություն»: Րաֆֆի Հովհաննիսյանի ներկայացմամբ՝ իշխանության գալու դեպքում «Ժառանգությունը» շինարարներին հաշվետու կլինի աշխատանքի, ապաստարանի, որակյալ բնակարանի հարցով, բայց ոչ երբեք՝ ողորմության: Նրա ասելով՝ նա, ով կուսակցական կամ իշխանական առաքելությամբ է գալիս Գյումրի, հարակից գյուղեր ու ասում է՝ վերցրեք ես բժիշկը, տոպրակը, գրպանի պարունակությունը, ապա նա սրտացավ ընկեր չէ: «Ժառանգության» հիմնադրի խոստանալով՝ մայիսի 6-ից նոր Հայաստանում ենք ապրելու, որտեղ ամենեւին էլ կարեւոր չէ՝ նոր մեծամասնության կրողը «Ժառանգությո՞ւնն» է, Րաֆֆի՞ն, թե՞ անունը Սերժ է, Լեւոն է կամ Ռոբերտ: «Այս կուսակցական այլանդակները թող մրցակցեն, բայց ոչ երբեք աթոռակռիվ անեն, բայց ոչ երբեք ժողովրդին բերեն այն հորձանուտը կեղտախոսության, որը հիմա փորձում են անել: «Ժառանգությունը» դրա հետ կապ չունի, «Ժառանգությունը» իր ժողովրդի հետ իր գործը անելու է, հարգում է բոլորին, բոլոր մրցակիցներին, բայց երբեք չի մտնելու ուրիշների խաղի մեջ»,- ասաց պարոն Հովհաննիսյանը:

Այնուհետեւ ելույթ ունեցավ անձրեւից թրջված ու դողացող Զարուհի Փոստանջյանը, որին Րաֆֆի Հովհաննիսյանը այսպես ներկայացրեց. «Մի մարդ, մի կին, ով իր ամբողջ կյանքը նվիրել է Հայաստանի իրավունքի պաշտպանությանը, հայ մարդը եղել է բերդում, պադվալում, Ջավախք լինի, թե Արեւմտյան Հայաստան՝ Զարուհի Փոստանջյանը նրանց կողքին է եղել»: Պատգամավորը, հետեւելով իր առաջնորդի օրինակին, եւս ելույթ ունեցավ առանց անձրեւանոցի: Կանգնելով Թատերական հրապարակում՝ նա հիշեց, թե ինչպես էին անցած տարի այդ նույն հրապարակում Գյումրու սառնամանիքին բողոքի ակցիա անցկացնում վրացական պետհամարանիշով մեքենաների վարորդների շահերը պաշտպանելու համար: Տիկին Փոստանջյանը նախազգուշացրեց, որ իրենք չեն հանդուրժելու ընտրակեղծիքները, Հայաստանի նոր իշխանությունը ձեւավորելու են օրենքի սահմանված կարգով, եւ նոր Հայաստանի նոր կառավարությունը կազմվելու է իրենց նոր թիմով:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցության ներկայացուցիչ Ալեքսանդր Արզումանյանն էլ, տեսնելով իրենց ելույթը լսելու համար հավաքված սակավաթիվ գյումրեցիներին, նեղվեց, թե Գյումրին իրեն հայրաքաղաքի պես չի պահում: «Հայրաքաղաք միայն անեկդոտներով չէ, դաս տվեք մայրաքաղաքին, ասեք՝ ոնց է պետք անել, 20 տարի առաջ Երեւանում միակ անկախ հեռուստաընկերությունը արգելվեց, Գյումրին էր մնացել ազատ խոսքի վերջին բաստիոնը, այստեղ է հեռարձակվում ԳԱԼԱ-ն, եւ մենք Երեւանից գալիս էինք ազատ խոսք ասելու: Դուք ձեզ հայրաքաղաքավարի էիք պահում, հնարավորություն էիք տալիս մեր խոսքը հասցնել, հիմա ի՞նչ է կատարվում, ինչի՞ց եք վախենում: Ստրկացնում են մեզ, կաշառք են տալիս, բարեգործություն են անում, հետո էլ ասում են՝ եկեք միացեք, կոալիցիոն պայմանագիր ստեղծենք՝ ազատ, անկախ ընտրություն անցկացնելու համար: Աչք փակեք, որ գող ենք, խաբենք ձեզ, 5 տարի ստրկացնենք, է՞դ եք ուզում, ոտքի կանգնեք, 22 տարի է՝ Գյումրու նման քաղաքը աղետի գոտի է կոչվում, ամոթ է մեզ, սա՞ է մեր երազած հայրենիքը»,- հարցրեց Ալեքսանդր Արզումանյանը:

Գյումրեցի ընտրազանգվածին վերջին խոսքը փոխանցեց Լենինգրադում Հայաստանի նախկին հյուպատոս, «Ժառանգության» փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը, ով ըստ էության պատասխանեց սեփական կուսակցության հասցեին հնչած այն քննադատություններին, թե «Ժառանգությունը» իշխանության հետ գործարքի մեջ է: Նա այս կապակցությամբ խստորեն քննադատեց թե ՀԱԿ-ին եւ թե «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, որոնք, նրա ձեւակերպմամբ, ընդդիմադիր դաշտում տեղ զբաղեցնելու համար այնքան բարոյազուրկ են դարձել, որ լուտանքներ են հնչեցնում իրենց կուսակցության հասցեին: «Ես հասկանում եմ, որ մարդիկ կարող են սխալվել, մարդիկ, որոնք իշխանության մեջ են եղել, հասկացել են, որ ինչ-որ բան սխալ է, փորձեն դուրս գալ՝ իրենց հանելու արդարության դաշտ: Բայց դավադրություն է կատարվում, մարդ իր ոտով իշխանության մեջ է եւ շարունակում է էս պետության հերը անիծել, իշխանության հետ ընդունել օրենք, որը վաղը կարող է ողբերգություն բերել էս պետությանը»: Ըստ պարոն Հակոբյանի՝ նրանք շատ վտանգավոր են, քանի որ կաշառելով՝ երկիրը հասցրել են այս վիճակին ու դեռ փորձում են դերակատար լինել ընդդիմադիր դաշտում: Պարոն Հակոբյանը նրանց առաջնորդին նախազգուշացրեց իր չափը ճանաչել, բարոյական լինել, չխաբել ժողովրդին՝ ընդդիմադիր անվան տակ ընտրակաշառք չբաժանել: Ռուբեն Հակոբյանը քննադատեց նաեւ այն քաղաքական ուժին, որը առաջնորդող էր գրում՝ «Ոչ դողացմանը» թեմայով, բայց այսօր ասում է՝ «այո դողացմանը»: «Դե տեսեք, թե ի՞նչ են նրանք հետապնդում, ինչի՞ են ուզում ձեզ խաբել, գողանալ ժողովրդի ընդդիմադիր տրամադրությունը: Նրանք ցույց են տալիս, թե իբրեւ ընդդիմություն են եւ ձեւացնում են, թե իշխանափոխություն են ուզում, բայց նրանք հանցագործների մի տեսակ են»,- ասաց բանախոսը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# «Տրակտորներն ընտրությունների հետ կապ չունեն»

«Դրանք հերյուրանքներ են եւ ժողովրդին թյուրիմացության մեջ են գցում»,- ասաց ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը՝ պատասխանելով լրագրողներից մեկի հարցին՝ անգամ ուկրաինական մամուլն անդրադառնալով Հայաստանի ընտրություններին՝ արձանագրել է ՀԱԿ-ի եւ ԲՀԿ-ի հարաբերությունների ջերմացում, գրել են, որ ԲՀԿ-ն ֆինանսավորում է ՀԱԿ-ին: Նա մեկ անգամ եւս վերահաստատեց, որ ՀԱԿ-ի հետ ԲՀԿ-ն՝ ընտրությունների օրինականության վերահսկման գործընթացից դուրս, որեւէ համագործակցություն չունի, եւ որ այդ առիթով տարբեր ձեւաչափերով համագործակցում են շատ քաղաքական ուժերի հետ: Երեկ ԲՀԿ-ի քարոզարշավը սկսվեց Արարատի մարզի Այնթափ գյուղից եւ ավարտվեց Վայոց Ձորով, որտեղ նախընտրական հանդիպումներ եղան Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ բնակավայրերում: Այնթափում իր համագյուղացիներին ԲՀԿ համամասնական ցուցակում տեղ գտած «Համերաշխություն» կուսակցության նախագահ Սարգիս Ավետիսյանը կոչ անելով ձայն տալ ԲՀԿ-ին՝ հայտարարեց, որ ԲՀԿ-ն այն կուսակցությունն է, որը կարող է պատասխանատվություն ստանձնել ՀՀ-ի անվտանգության եւ տնտեսական բարգավաճման համար: Եթե այս իշխանությունը այս կերպ վերարտադրվի, ըստ Ավետիսյանի, եւս 200 հազար մարդ կլքի Հայաստանը: Վայոց Ձորի մարզի մարզկենտրոն Եղեգնաձորում ԲՀԿ-ի ամենամարդաշատ հանդիպումն էր: ԲՀԿ-ական մարզպետ Սերգեյ Բագրատյանը, ինչպես նաեւ քարոզչական խմբի ղեկավարներ Տիգրան Ուրիխանյանն ու Միքայել Մելքոնյանը ջանացել էին, որպեսզի հավուր պատշաճի հյուրընկալեն կուսակցության առաջնորդին: Ծառուկյանն էլ իր հերթին դատարկաձեռն չէր գնացել. մարզին նվիրեց 10 տրակտոր: Իր ելույթում, սակայն, Գագիկ Ծառուկյանը հայտարարեց, որ դրանք ընտրությունների հետ որեւէ կապ չունեն: Ասաց, որ կուսակցությունն ավելի վաղ էր նախաձեռնել հանրապետության մարզերում մեքենատրակտորային պարկ ստեղծելու գործը, եւ անկախ ընտրությունների արդյունքում ԲՀԿ-ի հավաքած տոկոսներից՝ ինքը շարունակելու է հանրապետության մարզերում մեքենատրակտորային պարկերի համալրումը:




«Մի մարզպետն էլ մերն է, բայց դա կապ չունի»,- մատնացույց անելով Սերգեյ Բագրատյանին՝ Ծառուկյանը կրկին հորդորեց չտրվել ՏԻՄ ղեկավարների պարտադրանքներին, խորհրդարանական ընտրություններին մասնակցել ակտիվորեն եւ քվեարկել խղճի մտոք: ԲՀԿ նախագահը նաեւ քաղաքական ուժերին միավորվելու անուղղակի կոչ արեց: Իր խոսքում նկատելով, որ բոլոր կուսակցություններն էլ խոսում են Հայաստանի հզորացումից ու բարգավաճումից՝ հավելեց, որ պետք է մի մեծ միավորում լինի, որտեղ կուսակցական պատկանելությունը դեր չի խաղալու: Այն մարդիկ, ովքեր կկարողանան աշխատել, նրանք էլ պետք է աշխատեն: Մարզպետն էլ գովեց Ծառուկյանին՝ թե իբրեւ մարդու, թե իբրեւ բարերարի, թե իբրեւ կուսակցական առաջնորդի: Նրան համեմատեց Սասունցի Դավթի հետ:

Ամենահուզիչը Եղեգնաձորում երիտասարդ մի կնոջ՝ Աշխենի եւ ԲՀԿ առաջնորդի զրույցն էր: Աշխենն արդեն մի քանի տարի է՝ հաշմանդամ է, սայլակին գամված, ոչ մի հարազատ չունի: Եկել էր Ծառուկյանին խնդրելու, որ հաջորդ ԱԺ-ում վերանայեն օրենքները ու հարկային արտոնություններ սահմանեն՝ իր նման մարդկանց համար աշխատանքի հնարավորություններ ընձեռելով: Աշխենը փորձում է իր օրվա հացը վաստակել տանը՝ «օրական մի քանի կտոր խմորեղեն թխել-ծախելով»: Վերջերս հարկայինը եկել ու տուգանել է բավականին մեծ գումարով: Նախագահ Սերժ Սարգսյանի այցելության ժամանակ նրան էլ է դիմել, վերջինս խորհուրդ է տվել լիցենզիա հանել: «Իսկ դուք գիտե՞ք, թե լիցենզիա հանելն ինչ արժե... որ կարողանայի...»,- նեղսրտած ու վրդովված պատմում էր երիտասարդ կինը: Ծառուկյանն էլ հղում անելով ԲՀԿ ծրագրային դրույթներին՝ ասաց, որ իրենք շատ ոլորտներում են նախատեսում հարկային արտոնություններ սահմանել՝ մանր ու միջին բիզնեսը զարգացնելու համար:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Անհետ կորածների ծնողների համար պատերազմը չի ավարտվել

## Նրանք իրենց զավակներին տեսնելու հույսը չեն կորցնում

«Բոլորի համար պատերազմն ավարտվել է, իսկ մեզ համար՝ ոչ: Պատերազմը մտել է մեր ընտանիք ու դուրս չի գալիս: Ես խնդրում եմ, աղաչում եմ իշխանավորներին, պատգամավորներին, որ երբ հավաքվում են միջազգային ատյաններում ու պետական հարցեր լուծում, ինչ հարց էլ որ բարձրացնում են, վերջում թող հիշեն անհետ կորածների մասին: Մեր երեխաներն իրենց պարտքն էին կատարում հայրենիքի հանդեպ ու հիմա անազատության մեջ են: Աստվածահաճո գործ կլինի նրանց կողմից արված թեկուզ եւ մեկին գտնելը: Մենք այսօր ամենավատին ենք պատրաստ, միայն թե մի տեղեկություն լինի»,- «Առավոտի» հետ զրույցում արցունքն աչքերին իր եւ անհետ կորած զինծառայողների ծնողների անունից ՀՀ իշխանություններին դիմեց Շիրակի մարզի բնակիչ Լարիսա Չախոյանը: Լ. Չախոյանի որդին՝ Հայկ Գալստյանը, 1999 թվականին զինվորական ծառայության մեջ է եղել Տավուշի մարզում, բայց նույն թվականի հունիսի 4-ին արձակուրդ մեկնելիս Պառավաքար-Իջեւան հատվածում անհետ կորել է: Հայկի անհետանալուց մոտ 10 օր հետո, տիկին Լարիսայի պատմելով, ինչ-որ ադրբեջանցու միջոցով տեղեկացել են, որ որդին Բաքվի բանտում է, նույնիսկ որդուց նամակ են ստացել, որը եւս հավաստել է, որ բանտախցում փակված է: Արդեն 13 տարի է՝ տիկին Լարիսան հույսը չի կտրում եւ սպասում է որդու վերադարձին. «Սուտ է, որ ասում են՝ մեր երեխաները չկան, ես մոր սրտով զգում եմ նրա ներկայությունը, եւ ոչ մի անգամ մտքովս չի անցել, որ իմ երեխան չկա, ես հաստատ գիտեմ, որ նա այնտեղ է ու ճաշակում է ադրբեջանական բանտերի բոլոր սարսափները: Աղաչում եմ, դա Աստծուն դեմ է՝ մարդուն զրկել ազատությունից ոչինչ չանելու համար»: Տիկնոջ ներկայացմամբ՝ որքան էլ փորձել են տարբեր պետական կառույցների միջոցով որդու մասին տեղեկություն ստանալ ու վերադարձնել, մշտապես պատասխանել են՝ հիմա ոչինչ անել հնարավոր չէ: 2008 թվականից Հայաստանի հետ նման համագործակցություն չի կայանում, նույնիսկ միջազգային կառույցների խառնվելուց հետո էլ Ադրբեջանն իր քաղաքականությունը չի փոխում:

Մեզ հետ զրույցում գերիների, պատանդների եւ անհետ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովին առընթեր աշխատանքային խմբի ղեկավար Արմեն Կատրիելյանն ասաց, որ ադրբեջանական կողմը հայկական կողմի բոլոր հարցումներին անգամ հերքումով չի արձագանքում՝ ոչ հաստատում է, ոչ էլ հերքում, որ այսինչ անձն իրենց մոտ է կամ ոչ. «Դա Ադրբեջանի քաղաքական դիրքորոշումն է, եւ դա նրանք պատճառաբանում են՝ մինչեւ Լեռնային Ղարաբաղի հարցը չլուծվի, վերոնշված ուղղությամբ չեն համագործակցելու: Այնուամենայնիվ, մենք միջազգային բոլոր հնարավոր կառույցներում բարձրացնում ենք այս հարցը»:



Ըստ Ա. Կատրիելյանի՝ միայն Հայաստանից 200-ից ավելի անհետ կորածներ կան, որոնց թվում, բացի զինծառայողներից, ազատամարտիկներից, նաեւ սովորական քաղաքացիներ են: Ընդ որում, մոտ 90-ի վերաբերյալ գոնե որոշակի տեղեկություններ կային, որ օրինակ՝ գերի են ընկել, սակայն այս պահին որեւէ տեղեկություն չկա նրանց ողջ կամ մահացած լինելու մասին: Ըստ Արմեն Կատրիելյանի՝ Լեռնային Ղարաբաղի անհետ կորածների թիվը 3 անգամ գերազանցում է Հայաստանի թվին: Չնայած Ադրբեջանի նման դիրքորոշմանը՝ Հայաստանը բազմաթիվ անգամ, Արմեն Կատրիելյանի խոսքերով ասած՝ բարի կամք է դրսեւորել եւ վերադարձրել ադրբեջանցի գերիներին: Այսօր Հայաստանում 1 ադրբեջանցի, արդեն նախկին զինծառայող կա, որն էլ բնավ ցանկություն չունի վերադառնալ իր հայրենիք:

Այս տարիների ընթացքում քիչ չեն դեպքերը, երբ անհետ կորածների հարազատներն այլեւս տեղական ու միջազգային կառույցների վրա հույս չեն դնում եւ սեփական նախաձեռնությամբ են փորձում գտնել իրենց հարազատներին: Սովորաբար դա արվում է որեւէ՝ չեզոք օտարազգի ներկայացուցչի միջնորդությամբ: Սակայն Ա. Կատրիելյանի վստահեցմամբ՝ մինչ օրս անգամ մի դեպք չի եղել, որ այդ ճանապարհով հարազատները գտնեն իրենց անհետ կորածին. «Հայտնվում են ինչ-որ անձինք՝ վրացի, չեչեն՝ եւ, օգտվելով հարազատների անօգնական վիճակից, հսկայական գումար կորզելով՝ ոչինչ էլ չեն անում: Ասում են՝ մենք ձեր երեխայի գրած նամակը կբերենք կամ՝ նկարը, տեսանյութը, այնինչ դա ընդամենը մեծ գումարներ պոկելու առիթ է: Մենք զգուշացրել ենք, որ մեզ տեղեկացնեն, թե այդ ովքեր են: Մի դեպք չի եղել, որ գումարը տան ու իրենց հարազատին վերադարձնեն»:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) տվյալներով՝ 1992-ից իրենց մոտ գրանցվել է 4600 անհետ կորած՝ Հայաստանից, ԼՂՀ-ից եւ Ադրբեջանից: ԿԽՄԿ որոնման բաժնի աշխատակից Սուսաննա Գասպարյանի խոսքերով՝ հայ ընտանիքների տրամադրած տվյալների հիման վրա անհետ կորածների թիվը Հայաստանից 404 է, իսկ ԼՂ-ից՝ 446, մնացածն էլ՝ Ադրբեջանից: Ս. Գասպարյանի խոսքերով՝ այս թվերը փոփոխական են, քանի որ պարբերաբար դիմողներ են լինում: Անհետ կորածների՝ ողջ կամ մահացած լինելու վերաբերյալ տվյալներ անգամ միջազգային կառույցն ի վիճակի չէ ստանալ:

Ըստ Ս. Գասպարյանի՝ «Կարմիր խաչի միջազգային կոմիտեն մի քանի անգամ ցուցակներ է փոխանցել հակամարտող կողմերի իշխանություններին, որոնք էլ պատասխանատու են անհետ կորածների համար. նրանց ճակատագրերի մասին այսօր որեւէ պատասխան չկա»: 2009-ից ԿԽՄԿ-ն ավելի մանրամասն տեղեկություններ է հավաքագրում անհետ կորածների վերաբերյալ, որպեսզի հետագայում դրանք օգտագործեն աճյունների արտաշիրիմումից հետո ինքնության գործընթացի ժամանակ: Իսկ թե այդ արտաշիրիմումը երբ կսկսվի, ոչ ոք չգիտի: Ըստ ԿԽՄԿ-ի՝ 2010-ին այս կազմակերպության միջոցով 4 աճյուն, 1 զինծառայող եւ 1 քաղաքացիական անձ է հայրենադարձվել Ադրբեջան: Նույն թվականին Հայաստան է վերադարձվել 2 հայի աճյուն: Իսկ 2011-ին՝ 1 ադրբեջանցի զինծառայող է վերադարձվել եւ 1 Հայաստանի քաղաքացիական անձ:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Նախընտրական պայքար ասֆալտ-շիբինով

## Ասֆալտապատված շենքերի բակերից կարելի է հասկանալ, թե տվյալ շենքում որ թեկնածուի կողմնակիցները կամ որ կառույցի ղեկավարն է բնակվում:

Վերջին 1 ամսում Մասիսի տարածաշրջանում, ինչպես Հայաստանի մյուս շրջաններում, թվում է՝ բարության մթնոլորտ է տիրում, մոռացվածության կարգավիճակից դուրս են եկել կարիքավորները, հիվանդները, նրանց դարդին սկսել են դարման անել: Տարիներ ի վեր քանդված ու դարուփոսերով լի շենքերի բակերը նույնպես հայտնվեցին ուշադրության կենտրոնում. վերջին 1 ամսում Մասիսի շենքերի բակերը «հեղեղվեցին» շիբինով: Նախաձեռնությունը թիվ 16 ընտրատարածքի ԲՀԿ կառույցինն էր: Այստեղ շարժվեց ՀՀԿ-ի խանդը, եւ նույն շիբինի վրա գեղեցիկ ասֆալտ փռվեց, բայց այնպես փռվեց, որ կռալիցիոն գործընկերոջ արածը ջուրը չլցվի՝ ասֆալտի կողքին շիբինն էլ երեւա: Դա է պատճառը, որ Մասիսի շենքերի բակում հանդիպում է հատուկ սահմանագծով տարանջատված ասֆալտ-շիբինային ծածկույթ: Իսկ որ ամենահետաքրքիրն է, այս բակային քաղաքականության մեջ անգամ կռալիցիոն գործընկերները անտեսել են խորհրդարանական ընդդիմությանը եւ անասֆալտ են թողել «Ժառանգության» տարածքային կառույցի ղեկավար Նուբար Հակոբյանի բակը՝ մտածելով, որ Նուբարն այստեղ շատ ձայն է տանելու, ավելորդ ծախս պետք չէ անել: Իսկ որ ամենահետաքրքիրն է, «բարեգործները» անասֆալտ են թողել քաղաքի կենտրոնական փողոցները, որոնք հատկապես խիստ բարեկարգման կարիք են զգում. դե, կենտրոնական փողոցը ասֆալտեն, դրա դիմաց ումի՞ց ձայն պահանջեն: Բակերում հարցը հեշտ է՝ կոնկրետ շենքեր, կոնկրետ թվով բնակիչներ՝ իրենց «տենշալի» քվեներով:



Հիվանդանոց տանող փողոցներից մեկը մնում է քարուքանդ:

Սակայն իրականում այստեղ տիրում է վախի մթնոլորտ: Մարդիկ վախենում են ոչ միայն օտարների հարցերին պատասխանելուց, այլեւ իրենք իրենց անձնական շփումների մեջ են զգուշավոր: Հարցին՝ ումի՞ց են վախենում, մասիսցիները տալիս են անորոշ, բայց ենթատեքստ ունեցող պատասխաններ. «Մեզ պետք չի ոչ հանրապետականը, ոչ բարգավաճը, հանգիստ թողեք մեզ»: Ոմանք համաձայնվում էին խոսել միայն առանց ձայնագրիչի եւ ասում են, որ քաղաքում թշնամանք է տիրում, իրար դեմ լարվել են անգամ հարազատ-բարեկամները, խնամի, քավորսանիկները: Մարդիկ վախից արդեն բոլորի մեջ լրտեսների են տեսնում, որոնք կոչված են «բացահայտելու», թե ով ում կողմից է՝ Մուրադի՞ (ՀՀԿ-ական թեկնածու Մուրադյան), թե՞ Տիկոյի (ԲՀԿ-ական թեկնածու Տիգրան Ստեփանյան): Քաղաքում ավելի համարձակ խոսում են Մուրադ Մուրադյանի կողմնակիցները, կամ մարդիկ, որոնք գոնե արտաքուստ նրա ընտրողներն են եւ համարձակվում են այդ մասին բարձրաձայնել: Դրանից կարելի է հետեւություն անել, որ սպառնացող կողմը հիմնականում ՀՀԿ թիմն է: Այս առումով «Ժառանգության» Մասիսի տարածքային կառույցի ղեկավար Նուբար Հակոբյանն «Առավոտին» ասաց. «Մեզ մոտ կարծես թե Վարդանանց պատերազմն է, եւ դավանափոխներ են փնտրում, որ պատժեն: Եվ Աստված չանի, որ հայտնաբերվեն, մարդկանց սկսում են սպառնալ, թե կվնասեն երեխաներին, ընտանիքի անդամներին, անգամ եղել են դեպքեր, երբ մարդկանց աշխատանքից ազատել են: Էլ չեմ ասում, որ եթե հանկարծ մարդը ընդդիմության կողմնակից լինի, հարբած փղերով կգան-կհարձակվեն: Քիչ է մնում տարած հարսներին հետ ուղարկեն, եթե նրա հարազատը հակառակ ճամբարում լինի: Ատելությունն ու չարությունն այստեղ հասել են գագաթնակետին»: Նուբար Հակոբյանը ցավով նշում է նաեւ, որ մասիսցիներն արդեն սովորել են փողով ընտրություն կատարելուն. «Եթե Աթաթուրքն ու Քրիստոսն այստեղ առաջադրվեն, Քրիստոսը, բնականաբար, փող չի բաժանի, Աթաթուրքը փող կբաժանի ու կհաղթի: Դա մեր ամենամեծ ողբերգությունն է, որ մեր ժողովրդին դարձրել են այդպիսին: Չնայած հիմա մարդիկ ճարպիկացել են՝ փողը վերցնում են, այլ մարդու ընտրում»:

Մասիսում բնակիչներին նյարդայնացնում է նաեւ թեկնածուների նախընտրական պաստառների ու նկարների առատությունը. «Սա ի՞նչ բան է, ամեն քայլափոխի իրենց հայացքը սատանի նման հետեւում է մեզ, հայացքդ որտեղ էլ փախցնես, նրանց ես տեսնում, անգամ ասֆալտ անող մեխանիզմի վրա են թեկնածուի նկար դրել: Մնում է խանութում վաճառվող կանաչու ու սոխի վրա գնի փոխարեն նրանց նկարները դնեն: Չի կարելի մարդկանց այդքան հոգնեցնել՝ իրենց դեմքը մեզ պարտադրելով»:



Ասֆալտը ՀՀԿ-ն է արել, շիբինը՝ ԲՀԿ-ն:

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 21.04.2012

# Թաթուլը կարող է պատգամավոր ընտրվել, Խաչատուրը՝ ոչ

## Բնակության վայրն այն վայրն է, որտեղ քաղաքացին ապրում է մշտապես կամ՝ առավելապես

Կասկած չկա, որ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Խաչատուր Սուքիասյանի գրանցումը մերժել է՝ հիմք ընդունելով ոստիկանության հավելյալ հաղորդում-«Նակազը», թե վերջին 5 տարում Խաչատուրը հանրապետությունից բացակայել է ավելի քան 10 ամիս: Այդ որոշումը Խաչատուրը բողոքարկել է, ինչը ՀՀ վարչական դատարանը 5 դատավորի կազմով մերժել է:

ՀՀ վարչական դատարանն ապրիլի 6-ին մեկ ուրիշ որոշմամբ էլ մերժել է վերջին 5 տարում հանրապետությունում մշտապես չբնակվող Թաթուլ Հակոբյանին պատգամավորության թեկնածու գրանցելու թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ պատգամավորության թեկնածու Ս. Հարությունյանի բողոքը:

Նկատենք, որ միեւնույն հիմքի պարագայում Թաթուլը կարող է պատգամավոր դառնալ, իսկ Խաչատուրը՝ ոչ: Ի դեպ, Թաթուլի գործով դատարանի վճիռը նորույթ է՝ գլխի է գցել, որ գրանցման դեմ ոստիկանությունը չի վիճարկում:

Իմ պատկերացմամբ, Խաչատուրի նկատմամբ հանձնաժողովի որոշումը եւ դատական ակտը անհիմն են եւ չեն բխում տվյալ հարաբերությունը կարգավորող նորմի էությունից, ինչը քննարկենք ստորեւ:

Քաղաքացիները համարվում են քաղաքացիական իրավունքի սուբյեկտ եւ ունեն քաղաքացիական իրավունքներ ունենալու եւ պարտավորություններ կրելու ունակություն: Հիշյալ քաղաքացիական իրավունակության բովանդակությանը համահունչ՝ քաղաքացիները կարող են սեփականության իրավունքով գույք ունենալ, ժառանգել եւ կտակել գույքը, զբաղվել ձեռնարկատիրական եւ օրենքով չարգելված ցանկացած այլ գործունեությամբ, ընտրել բնակության վայր եւ այլն: Ինիցիալից, քաղաքացիական իրավունքների ծագման, իրացման, պաշտպանման հետ կապված, ինչպես նաեւ բազմաթիվ այլ հարցերի լուծման համար կարեւոր նշանակություն ունի բնակության վայրը:

Օրինակ՝ պարտավորությունների կատարման վայրը համարվում է պարտատիրոջ գտնվելու բնակության վայրը, ժառանգության բացման վայր ճանաչվում է ժառանգատուի վերջին բնակության վայրը եւ այլն: Իսկ երբ հիմնական օրենքում ասվում է՝ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել վերջին 5 տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք (64 հոդված) կամ հանրապետության նախագահ կարող է ընտրվել վերջին 10 տարում հանրապետությունում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր անձ (50 հոդված), ապա սրանք նույնպես փոխկապակցված են բնակության վայր հասկացության հետ եւ հանդիսանում են քաղաքացիական իրավահարաբերությունների առարկա: Բնակության վայրը ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 23 հոդվածում, ըստ այդմ՝ «բնակության վայրը այն վայրն է, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է»: Նկատելի է, որ նորմի կազմը մշտապես կամ առավելապես ապրել կատեգորիան է, ըստ այդմ՝ օրենսդրությամբ արգելված չէ քաղաքացու ազատ տեղաշարժը, ինչպես նաեւ սեփական երկրից մեկնելու եւ վերադառնալու իրավունքը: Հետեւաբար, այդ առիթներով կարճատեւ բացակայությունների հանրագումարը բնակության վայրում քաղաքացու մշտապես կամ առավելապես չբնակվելու չափանիշ ճանաչելը հիմարություն է եւ հակասում է ՀՀ հիմնական օրենքին, ինչպես նաեւ միջազգային դրույթներին:

Աշխատանք ընտրելու ազատությունը, օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, հանգստի, սեփական երկրից մեկնելու եւ վերադառնալու իրավունքը քաղաքացու անօտարելի իրավունքներն են (Սահմանադրության 32 հոդված, 33 հոդված, 33 պրիմ հոդված, 1966թ. նոյեմբերի 16-ի «Քաղաքացիների քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» հռչակագրի 12 հոդվածի 2-րդ մաս): Պետք է նկատել, որ այդ թվաբանությամբ առաջնորդվելու պարագայում Սահմանադրության 50 հոդվածի արգելքով էլ գործող նախագահը 2013թ. չի կարող ընտրվել նախագահ, քանզի վերջին 10 տարում հանգստի, զվարճությունների կամ պաշտոնական այցերի առիթներով հանրապետությունից նրա բացակայությունների հանրագումարը մեկ տարուց ավելի կլինի:

Նաեւ տրամաբանական հարց է ծագում. իսկ ինչո՞ւ նույն թվաբանությունը ԿԸՀ-ն չի տարածում հանրապետությունից հեռացած, արտերկրում բնակության վայր ընտրած եւ տվյալ պետության քաղաքացիությունն ընդունած քաղաքացիների վրա, որոնց ընտրողների ռեգիստրը եւ ընտրողների ցուցակները ճիշտ վարելու եւ կազմելու համար պատասխանատու կոչված կառավարության լիազոր մարմինը խոթել է համապետական ընտրության ցուցակները (արծարծվում է 500-700 հազար քաղաքացի): Այդ քաղաքացիները ՀՀ-ում ընտրելու իրավունք չունեն եւ այդ ռեզերվը ռեալ վտանգ է ընտրությունների քվեարկության արդյունքները կեղծելու համար: Հավատա՞նք, որ կփոխեն:

ԱՐԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Իրավաբան, Մոսկվա



### Թունավորումներով

«1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ աջրից (ժավելից) թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Նորք- Մարաշ վարչական շրջանի թիվ 6 փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 19 տանը բնակվող՝ 1994թ. ծնված Գյուլիզար Զոյյանը:

Իսկ Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոցից հայտնել էին, որ թունավորման նախանշաններով հիվանդանոց են տեղափոխվել նույն քաղաքի Գորկու 67 շենքի 35-րդ բնակարանի բնակիչներ՝ 1957թ. ծնված Հայկուշ, 1964թ. ծնված Անահիտ եւ 1965թ. ծնված Նարինե Գասպարյաններն ու 1981թ. ծնված Սեդա Դիլանյանը:

### Բախվել էին

Գավառ-Մարտունի ավտոճանապարհի 12-րդ կմ-ում դեռեւս չբացահայտված հանգամանքներում բախվել են «Կամազ» մակնիշի պ/հ չպարզված եւ «ՎԱԶ-2121» մակնիշի 02 LU 999 պ/հ ավտոմեքենաները: Մինչ փրկարարների ժամանումը՝ «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ 1961թ. ծնված Գագիկ եւ ուղեւոր՝ 1978 թ. ծնված Գեւորգ Շահրիկյանները վնասվածքներով տեղափոխվել են Գավառի կենտրոնական հիվանդանոց: Բժիշկների գնահատմամբ՝ Գագիկ Շահրիկյանի առողջական վիճակը ծանր է, իսկ մյուս տուժածինը՝ միջին ծանրության:

### Ջրաբերանին

Սեւան քաղաքի բուսաբանական այգու մոտ դեռեւս չբացահայտված հանգամանքներում «ՎԱԶ-2121» մակնիշի 06 LU 347 պ/հ ավտոմեքենան (վարորդ՝ Ավետիսյան) թափքի առաջամասով կախվել էր հարակից ձորակը: Հրշեջ-փրկարարներն ավտոմեքենան դուրս են բերել ճանապարհի երթեւեկելի մաս: Զոհեր եւ տուժածներ չկան:

# Հայոց մեծ եղեռնի մի վավերագիր եւս

Մարդկությանը հայտնի պատմությունը դեռեւս չի արձանագրել մի ոճրագործություն, որը հավասարվեր անցյալ դարի սկզբին թուրքերի կողմից հայ ժողովրդի նկատմամբ գործադրված Մեծ եղեռնին: Այսօր արդեն դժվար է գտնել Մեծ եղեռն անմիջականորեն տեսած մարդկանց, որոնք կենդանի վկաներն էին իր նախադեպը չունեցող եղեռնագործության: Նրանցից մեկն էլ Հովհաննես Կարապետյանն էր, որը վաղուց հեռացել է կյանքից, բարեբախտաբար, թողնելով գրավոր մի հիշատակարան, որում հավաստի փաստերով ներկայացվում են թուրքերի կողմից ձեռնարկված քստմնելի ոճրագործությունները, որոնք կատարվել են իր աչքի առաջ՝ Ադաբազարից մինչեւ Դեր-Զոր: Նա այդ ժամանակ եղել է 15 տարեկան, Ադաբազարի Կեդրոնական վարժարանն ավարտած մի պատանի եւ իրենց բազմանդամ գերդաստանից միակն է, որ հրաշքով էր փրկվել եւ հետագայում հասել էր Արեւելյան Հայաստան:




Հովհաննես Կարապետյանն անցել է Գողգոթայի ճանապարհը, ուր սրախողխող են արվել իր բոլոր հարազատները, ադաբազարցիները: Այդ հուշագրությունը կրում է «Վերածնված կյանք մը. երեւակայական եւ իրական սարսափների արանքում» վերնագիրը: Երբ կարդում ես այս գիրքը, իրոք, քեզ զգում ես սարսափների արանքում, նույնիսկ չես ուզում հավատալ, որ աշխարհում օրը ցերեկով կարող էին տեղի ունենալ նման ոճրագործություններ:

Գիրքը խմբագրել, հրատարակության է պատրաստել բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Մաղալյանը: Այն լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը: Առաջաբանը գրել է ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Հայկ Դեմոյանը: Հուշագրությունը մինչ անցյալ տարի մնացել էր անտիպ:

Հովհաննես Կարապետյանի գիրքը կարդացվում է լարված հետաքրքրությամբ: Գրքում զետեղվել են փրկված լուսանկարներ: Իր ամբողջության մեջ գիրքը մի հավաստի վավերագիր է Հայոց մեծ եղեռնի մասին:

Մ. ՎԱՀԱՆՅԱՆ

# Տաքսու վարորդը հեռացել է, որ իր վրա չհարձակվեն

Երեկ, ժամը 14-ի սահմաններում, Երեւանի Թբիլիսյան խճուղու վրա, «Կոկա- կոլա» ընկերություն տանող ճանապարհի խաչմերուկում «Մերսեդես» մակնիշի «Տ» դասի 01 VS 015 համարանիշի մեքենան բախվել է էլեկտրասյանը:

Ինչպես դեպքի վայրից «Առավոտին» հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, «Մերսեդեսի» վարորդը՝ 34-ամյա Արման Ղեւոնդյանը վթարի վայրից «1-03» շտապօգնության ծառայության կողմից տեղափոխվել է հիվանդանոց: «Մերսեդեսի» հարվածի հետեւանքով էլեկտրասյունը տրովվել է՝ կտրելով նաեւ էլեկտրալարերը: Վթարի վայրում հավաքվածները ֆոտոլրագրողին պատմել են, որ «Մերսեդեսը» մեծ արագությամբ սլանալիս է եղել, եւ նրա առջեւ է դուրս եկել «Դեյու» մակնիշի L 0813 համարանիշի տաքսի ավտոմեքենան եւ բախումից խուսափելու նպատակով փորձել է «փախցնել» մեքենան եւ բախվել է էլեկտրասյանը: Դեպքի վայր են ժամանել Երեւանի ճանապարհային ոստիկանության աշխատակիցները եւ ԱՊՊԱ գործակալության ներկայացուցիչները: Հավաքվածները Գ. Շամշյանին պատմել են նաեւ, որ տաքսու վարորդը վթարի վայրից հեռացել է, քանի որ «Մերսեդեսի» համար ժամանած անձինք փորձել են հարձակվել նրա վրա:

### Տատիկը Ծառուկյանից հեռուստացույց է «պոկել»

Ապրիլի 19-ին Բագրատաշենում նախընտրական հանդիպման ժամանակ Գագիկ Ծառուկյանին է մոտեցել 70-անց Սուրախան Աբովյանը: Նա ասել է, որ նախորդ օրը հեռուստացույցով Ծառուկյանին չի կարողացել տեսնել, միայն նրա ձայնն է լսել, քանի որ իր հեռուստացույցը փչացել է: Ծառուկյանը միայնակ կնոջը 300 դոլար է նվիրել, որպեսզի նոր հեռուստացույց գնի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Կարեն Արիստակեսյանը փակել է Ռաֆայել Իսրայելյանի կամարները»

## Հարցը հասել է մինչեւ ՀԽ Մշակույթի ենթահանձնաժողով

Հանրային խորհրդի Մշակույթի ենթահանձնաժողովի երեկվա նիստի հատկապես այն հատվածն էր աղմկոտ, որը վերաբերում էր մշակույթի նախարարությունից պաշտպանության նախարարության ենթակայությանն անցած Հայաստանի ազգագրության (Սարդարապատ) թանգարանին:

Վերջինիս Ոչ նյութական մշակութային ժառանգության ուսումնասիրման բաժնի վարիչ Սուսաննա Մելիքյանի (լուսանկարում՝ մեջտեղում) ասելով՝ «շեֆերի» փոփոխությունից գիտական օջախի վիճակը ամենեւին չի բարելավել: Այժմ բազում ցավոտ խնդիրներ ունեն՝ ցուցանմուշների պահպանության, գիտական կազմի բացակայության, մասնագետների հոսունության, անգամ կրծողների դեմ պայքարի: «Կարելի է ասել՝ կանգնած ենք կոտրած տաշտակի առաջ»,- հայտարարեց տիկին Մելիքյանը ու նեղսրտեց, թե ռազմական գերատեսչությունը ազգագրության թանգարանը սկսել է ընկալել որպես ազգային ազատագրական պայքարի թանգարան, մինչդեռ ազգագրության ցուցանմուշների միայն 1%-ն է վերաբերում Սարդարապատի ճակատամարտին: Թանգարանի ներկայացուցչի ասելով, պաշտպանության նախարարությունը նույնիսկ մտածել էր զինվորների արձաններ կանգնեցնել, մինչդեռ հուշահամալիրի շենքի հեղինակ Ռաֆայել Իսրայելյանը նման բան չի նախատեսել, $30000-անոց մետաղական կոնստրուկցիա են տեղադրել սրահներից մեկում, որը թանգարանը ստիպված որպես վահանակ է օգտագործում:



ՀԽ Մշակույթի ենթահանձնաժողովի նիստն անցավ բուռն քննարկումներով:

Նիստի մասնակիցներն անընդհատ հետաքրքրվում էին՝ որեւէ մեկին նամակով դիմե՞լ են: Սուսաննա Մելիքյանն ասաց, որ պատրաստ է բոլորին ցույց տալ դիմումների հաստ տրցակը:

Նա Հանրային խորհրդի Մշակույթի ենթահանձնաժողովի անդամներին խնդրում էր օգնել. «Տնօրեն Կարեն Արիստակեսյանը քանդել է մանրակերտը, փակել Ռաֆայել Իսրայելյանի կամարները, ասում է Եվրոպայում տեսել եմ՝ թանգարաններում էդպես է... Երեւի խեղճ մարդը (Ռաֆայել Իսրայելյանը) հիմա դագաղում շուռ է եկել, ո՞նց կարելի է նման բան անել, ախր մանրակերտը նաեւ էթնիկ ինքնագիտակցության խնդիր էր լուծում»: Ըստ Մելիքյանի, բոլոր չինովնիկ տնօրենների ամբողջ մտածմունքն այն է, թե առանց գիտական խորհրդի կարծիքի՝ ինչ փոփոխեն թանգարանում, որ հաճոյանան «վերեւներին»: Նա նեղվում է, որ վերջերս թանգարանին, իր ձեւակերպմամբ՝ նաեւ պաղպաղակի «բուդկա» են ավելացրել. «Ասում են, թե իբր դիտակետ է՝ տուրիստը կգա, էդտեղից Մասիսին կնայի ու թանգարանին փող կտա»:

Տիկին Մելիքյանը դժգոհելով բոլոր տնօրեններից՝ ասաց, որ միայն Արիստակեսյանի օրոք է իրենց արտաբյուջեն մեծացել ու տարածքը խնամվել, բայց նա էլ ծայրահեղ անհանդուրժող է գիտական կազմի նկատմամբ, ինչ վերաբերում է փոխտնօրենին, բաժնի վարիչի խոսքով, նա էլ մասնագետ է, բայց ամբիցիաներ բանեցնող եւ անբարեխիղճ: ՀԽ Մշակույթի ենթահանձնաժողովի ղեկավար Գագիկ Մանասյանը խոստացավ քննարկման դնել բոլոր ցավոտ հարցերը ու հնարավոր լուծումներ գտնել:

Թանգարանի բաժնի վարիչը առաջարկում էր, որ իրենց կառույցը լինի նաեւ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտների ուշադրության ներքո, իսկ մշակույթի նախարարության փորձագետները գնահատեն խայտառակ վիճակում հայտնված գորգերն ու նվագարանները:

Հիշեցնենք, որ դեռեւս 2004 թվականին «Առավոտում» տպագրված «Թանգարանը պահեստարան չէ» հոդվածում պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանը, ով ժամանակին ղեկավարել է Ազգագրության թանգարանը, առաջարկել էր հին կարգավիճակով թողնել այն, սակայն թանգարանի կենտրոնական սրահը, որ զբաղեցնում է 800 քմ տարածք, հատկացնել Սարդարապատի, Ղարաքիլիսայի եւ Բաշ-Ապարանի ճակատամարտերի պատմությանը: «Հաղթանակ» զբոսայգում գտնվող եւ ՊՆ-ին ենթակա թանգարանի ցուցադրությունն ընդլայնել ու Սարդարապատում նախատեսվող ու արդեն կազմակերպված թանգարանային բաժինները տեղափոխել Երեւան եւ այդ բոլորի հիման վրա ստեղծել «Ազգային-ազատագրական պայքարի եւ զինված ուժերի պատմության թանգարան»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «Եվրակոնկուրսը» հետաքրքրված է հայերով

## «Մեղավորն» էլ մեր ֆրանսահայ հայրենակցուհին է

Վերջերս Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, դիրիժոր Վահան Մարտիրոսյանի ղեկավարությամբ, Հայաստանի պետական կամերային նվագախմբի հետ հայ երաժշտասերին առաջին անգամ ներկայացավ Ֆրանսիացի ճանաչված դաշնակահար Դանիել Լավալը: Սա երաժշտի երկրորդ այցն էր, իսկ առաջին անգամ արվեստագետը Հայաստան է եկել դաշնակահարների ֆրանսիական «Եվրակոնկուրս» միության նախագահ Իվ Ռոբերի հետ, որի ընթացքում վարպետության դասեր է անցկացրել կոնսերվատորիայում եւ ընտրել ուսանող դաշնակահարներ՝ Ֆրանսիայում ներկայացնելու նպատակով: Արդյունքում՝ 2011թ. կոնսերվատորիայի ուսանողներ Իզաբելլա Մարությանն ու Սյուզաննա Իսրայելյանը համերգային շրջագայության են մեկնել:

«Առավոտը» հանդիպեց դաշնակահարների ֆրանսիական «Եվրակոնկուրս» միության անդամ, մասնագիտությամբ քաղաքագետ Քրիստինա Զադուրյանին (լուսանկարում): Վերջինս հայտնեց, որ միությունը հիմնվել է 2007թ., իսկ ինքը միայն 2010-ին է սկսել անդամությունը «Եվրակոնկուրսի» հետ: Ասաց, որ մտադիր է ապագայում Ֆրանսիա-Հայաստան կապը ընդարձակել մշակութային այլ ոլորտներում եւս: Իր խոսքերով՝ «Հայաստանցի տաղանդավոր արվեստագետներից շատերը հայտնվելով Ֆրանսիայում, իրենց չեն կարողանում գտնել նախընտրած ոլորտում եւ հետեւաբար ստիպված սկսում են զբաղվել բիզնեսով: Գուցե Երեւանի կոնսերվատորիայում ուսանում են խաչատրյաննե՞ր, մանսուրյաննե՞ր, տերտերյաննե՞ր... հետեւաբար նման երիտասարդներին պետք է նաեւ ներկայացնել եվրոպացի ունկնդրին, այսպիսով հնչեցնելով «յան»-ով վերջացող հայկական ազգանունները: Սա էր պատճառը, որ ես մի կողմ դրեցի քաղաքագետի՝ իմ մասնագիտությունը եւ ինձ նվիրեցի այս գործին»: Մեր ֆրանսահայ հայրենակցուհին հայտնեց, որ «Եվրակոնկուրս» կազմակերպությունում գրանցված պետությունների թվում միայն Հայաստանն է, որ եվրոպական երկիր չէ: Իսկ միությունը մշտապես ուշադրության կենտրոնում է գտնվում մշակութային հարցերով եվրոպական հանձնակատար Անդրուլա Վասիլիուի կողմից: Մեր ֆրանսահայ զրուցակիցը հավելեց, որ հայաստանյան հաջորդ լսումները կկայանան 2013թ.: «Այս անգամ եւս ցանկանում ենք, որ Դանիել Լավալը վարպետության դասեր անցկացնի Երեւանի կոնսերվատորիայում եւ ծրագրավորել ենք նրա մենահամերգը նոյեմբերին՝ Էդուարդ Թոփչյանի ղեկավարած Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ»,- ասաց Ք. Զադուրյանը: Նշեց, որ այս հարցում իրենց աջակցում է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը, Grand Thornton-ը եւ Air France-ը:



Հետաքրքրությանը, թե այս օրերին գտնվելով Երեւանում, ի՞նչ տպավորություն է ստացել ԱԺ նախընտրական քարոզարշավից, եւ, ընդհանրապես, ի՞նչ մոտեցում ունեն ֆրանսահայերը մեր երկրում տարվող քաղաքականությանը, մեր զրուցակիցը ժպտալով ասաց, որ եթե լիներ երկքաղաքացի՝ կհայտներ իր կարծիքը, բայց հիմա չի ցանկանում բարձրաձայնել դրա մասին. «Կշեշտեմ, որ ոգեւորված ենք Հայաստանի եւ Ֆրանսիայի նախագահների փոխադարձ այցելություններով»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## Զոլյանը չի ասում՝ ինչ է քննարկել ՀՀ նախագահի հետ



Երեկ Վ. Բրյուսովի անվան համալսարանում նախկին ռեկտոր Սուրեն Զոլյանի հետ հանդիպման ժամանակ ուսանողներից մեկը հարցրեց՝ իրականությանը համապատասխանո՞ւմ են լուրերը, թե իրենց համալսարանի շենքն արդեն գնորդ ունի, եւ նախատեսված է բուհի փոխարեն հյուրանոց կառուցել: Ի պատասխան՝ պարոն Զոլյանն ասաց. «Չեմ կարող մեկնաբանել... Եկեք այս պահին գոնե այս հարցում հավատանք պարոն նախարարին, որը հերքել էր լուրը, բայց սպասենք, որ պարոն վարչապետն էլ դրա մասին ասի»: Ուսանողներից մեկն էլ անդրադարձավ նախարարի երեկվա հայտարարությանը, թե բուհը դիպլոմների որակավորման խախտումներ է թույլ տվել: «Նախարարի պնդումներն իրականությանը չեն համապատասխանում, բարի համբավը արատավորելու հարցադրումն ենք բարձրացնելու դատարանում: Չեմ ցանկանում նախարարի այս կամ այն հայտարարությանն անդրադառնալ, բայց իմ օգնականներն այդ բոլոր հայտարարությունները հավաքում են, եւ հարկ եղած դեպքում՝ դրանց համապատասխան իրավական գնահատական է տրվելու»,- պատասխանեց պարոն Զոլյանը:

Aravot.am-ը պարոն Զոլյանից հետաքրքրվեց, թե երեկ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանն ինչ հարցեր են քննարկել: «No comment. այդ հարցը ուղղեք նախագահի մամուլի ծառայությանը»,- ասաց պարոն Զոլյանը:

ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

# Երեւանը «Կինոշոկ» կապրի

Ապրիլի 20-21-ը Երեւանի Մոսկվայի տանը եւ «Մոսկվա» կինոթատրոնում կցուցադրվեն ԱՊՀ եւ մերձբալթյան երկրների «Կինոշոկ» փառատոնի տարբեր տարիների ընթացքում մրցանակների արժանացած ֆիլմեր, նաեւ Հարություն Խաչատրյանի «Սահմանը»:

Փառատոնը, 20-ամյակի կապակցությամբ, «կշրջագայի», ու ֆիլմերի ցուցադրությունը կմեկնարկի Երեւանից, քանի որ 20 տարիների ընթացքում հայկական 16 ֆիլմ արժանացել է մրցանակների: Կինոգետ Դավիթ Մուրադյանը լրագրողների հետ երեկ կայացած հանդիպմանը նշեց, որ «Կինոշոկն» իր գործունեությունը սկսել է 1992թ.-ից, երբ Սովետական Միության փլուզումից հետո միավորեց տարբեր ժողովուրդների կինոմշակույթը. *«Այս տարիների ընթացքում են կայացել բազմաթիվ ազգերի ռեժիսորներ եւ դերասաններ, ովքեր ներկայացրել են կինեմատոգրաֆիայի նոր հնարքներ եւ բացահայտումներ»:* Դերասանուհի Կլավդիա Կորշունովան նշեց. *«Անհասարակ, փառատոնը խելացի է կազմակերպված եւ ժողովուրդների միջեւ եղբայրություն է քարոզում»:*

Ղազախ դերասան Մենտայ Ուտեմբերգենովն էլ Aravot.am-ի հետ զրույցում նշեց, որ փառատոնը ռեժիսորներին եւ դերասաններին թույլ է տալիս մոռանալ կրոնական եւ ազգային պատկանելությունը ու ստեղծագործել ընկերական ջերմ մթնոլորտում. *«Հատկապես հայերի ֆիլմերով եմ տպավորված: Հայաստանում ունեմ շատ ընկերներ, իսկ Արմեն Ջիգարխանյանի հետ բազմաթիվ դժվարություններ ենք հաղթահարել»:* Նշենք, որ «Կինոշոկ» փառատոնի կազմակերպիչները հաճախ լրագրողների հետ հանդիպել են զավեշտալի պայմաններում. որոշ ասուլիսներ, օրինակ, անցկացվել են լողավազանի ափին կամ զագում:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

VivaCell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Հայ գործարարները նախընտրում են սպորտը



Ի տարբերություն աշխարհում վաղուց ընդունված կարգի, երբ ժամանակ առ ժամանակ հրապարակվում են տարբեր երկրների ամենահաջողակ բիզնեսմենների անունները եւ նրանց կարողությունները, մեզանում նման պրակտիկա չկա: Սակայն Հայաստանում էլ մեծահարուստները քիչ չեն, եւ ժողովուրդը նրանց, ինչպես ասում են, անգիր գիտի:

Ուրախալի է, որ մեր ամենահայտնի մեծահարուստների մի զգալի մասը սիրում է սպորտը: Բայց ոչ որպես սովորական մարզասեր: Նրանք կամ ղեկավարում են սպորտի այս կամ այն ոլորտը, կամ լուրջ ներդրումներով նպաստում ինչպես իրենց նախասիրած մարզաձեւում բարձրագույն վարպետության զարգացմանը, այնպես էլ մասսայական սպորտի ու առողջ ապրելակերպի արմատավորմանն ու տարածմանը: Թե իր սեփական միջոցներից ո՞վ՝ որքա՞ն գումար է հատկացնում նախասիրած մարզաձեւին, հայտնի չէ ու, ըստ էության, էական էլ չէ: Կարեւորն այն է, որ առանց նրանց ներդրումների ու հովանավորության՝ սպորտում մենք այսքան հաջողություններ դժվար թե ունենայինք, միջազգային ամենահեղինակավոր մրցումներում հայ մարզիկների կրծքին դժվար թե այսքան մեդալներ փայլեին ու Հայաստանի հիմներգը հնչեր աշխարհի տարբեր երկրներում:

Հայկական սպորտը հովանավորող բիզնեսմենների ներկայացվող ցուցակն ամբողջական չէ: Բայց ոլորտում նրանց կատարած ներդրումների մասշտաբները պատկառելի են:

Առաջին տեղում, բնականաբար, ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանն է: Եվ, չնայած, նա կոնկրետ մարզաձեւ չի ղեկավարում, բայց դրա փոխարեն անձնական միջոցներից, անկախ մարզաձեւից, առատաձեռն ֆինանսավորում է առաջատար ու հեռանկարային մարզիկներին ու մարզիչներին, նրանց ուսումնամարզական հավաքները, իսկ բարձր արդյունքների համար՝ նաեւ խրախուսում խոշոր գումարներով, մեքենաներով ու բնակարաններով:

Ներկայացվող ցուցակում մեր մյուս գործարարների հերթականությունը վարկանիշային չէ:

Ռուբեն Հայրապետյան: ՀՖՖ նախագահ

Սամվել Կարապետյան: Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ, «Տաշիր Գրուպ»:

Արման Մուրադյան: Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ, «ԲԱՄՕ» ընկերություն:

Ռալֆ Յիրիկյան: «Ուլիս» ֆուտբոլային ակումբի հովանավոր, «Viva Cell MTS»-ի տնօրեն: «Viva Cell»-ը նաեւ հովանավորում է բազմաթիվ մարզական ծրագրեր:

Հայրապետ Հայրապետյան: Հայաստանի ձիասպորտի ֆեդերացիայի նախագահ: Հարություն Փամբուկյան: Հայաստանի թենիսի ֆեդերացիայի նախագահ:

Միխայիլ Բաղդասարով: «Միկա» ֆուտբոլային ակումբի հովանավոր եւ սեփականատեր: Մաքսիմ Հակոբյան: «Գանձասար» ֆուտբոլային ակումբի նախագահ: Սամվել Ալեքսանյան: «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի հովանավոր:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## Դուբայում Վլադիմիր Հակոբյանը բաժանում է 1-2-րդ տեղերը

Միացյալ Արաբական Էմիրությունների մայրաքաղաք Դուբայում ընթացող շախմատի «Շեյխի գավաթ» միջազգային մրցաշարի հինգերորդ տուրից հետո մրցաշարային աղյուսակը 4,5-ական միավորով գլխավորում են համաշխարհային օլիմպիադայի հաղթող եւ աշխարհի թիմային չեմպիոն, գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը եւ Չինաստանի ներկայացուցիչ Նի Հուան:

Նրանցից կես միավոր պակաս վաստակել են 18 շախմատիստներ, որոնց մեջ են նաեւ Հայաստանի երկու գրոսմայստերներ՝ 4-րդ տեղում ընթացող Տիգրան Լ. Պետրոսյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը (20-րդ հորիզոնական): Մեր մյուս շախմատիստներից առավել հաջող է հանդես գալիս նաեւ Զավեն Անդրիասյանը, որը 3,5 միավորով 22-րդն է:

Այսօր Հակոբյանը սեւերով խաղալու է Նի Հուայի հետ, իսկ Պետրոսյանի մրցակիցը կլինի երիտասարդ Հովհաննիսյանը:

## Մեկնարկում է Արոնյան-Կրամնիկ մրցամարտը




Այսօր Ցյուրիխում մեկնարկում է ՖԻԴԵ-ի վարկանիշային ցուցակի 2-րդ համար, հայաստանցի Լեւոն Արոնյանի եւ նրան հաջորդող ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկի միջեւ մրցամարտը: Գրոսմայստերները խաղալու են վեց դասական պարտիա: Մրցաշարի կանոնադրությամբ, եթե պարտիան ավարտվի ոչ-ոքի մինչեւ երեք ժամը լրանալը, մրցակիցները պարտավոր են խաղալ մեկ արագ պարտիա:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

## Նոր ներկայացում՝ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի եւ «Բռիեմի» համագործակցության արդյունքում



Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը ստանձնել է «Օպերացիա «Նեմեսիս» ներկայացման հովանավորությունը:

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ն ուրախ է տեղեկացնել, որ աջակցում է թատերարվեստի լեզվով համամարդկային խնդիրների ներկայացմանը: «Բռիեմ» հասարակական մշակութային կազմակերպության հետ համագործակցությունն այդ տրամաբանության արդյունք է: Կրթության նպատակը մարդուն մտածել սովորեցնելն է: Այն կրկնապատկում է իր արդյունավետությունը, երբ արտահայտվում է արվեստի լեզվով: Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը կարեւոր է համարում թատրոնի լեզվով գեղեցիկ եւ համարձակ մտածողության սերմանումը: Ռեժիսոր, դերասան Նարեկ Դուրյանի «Օպերացիա «Նեմեսիս» ներկայացումը նոր լուծումներով համամարդկային խնդիրները վեր հանելու միջոց է: Այն մարդկությանը սթափեցնելու եւ բարոյական խիղճախության կոչելու յուրօրինակ փորձ է: Ներկայացման բովանդակությունը հիմնված է հայտնի ֆրանսիացի գիտնականներ Ժերար Շալյանի, Իվ Տեռնոնի, Ժակ Դերոժի աշխատությունների, Սողոմոն Թեհլերյանի դատավարության արձանագրությունների եւ Պերճ Զեյթունցյանի «Ոտքի՛, դատարանն է գալիս» պիեսի վրա: Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ներկայացումն առաջին անգամ հանդիսատեսի դատին ներկայացվեց ապրիլի 19-ին:

# Մեկնարկել է «Երկրի օր-2012» քարոզարշավը

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ի եւ «Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի» համատեղ ասուլիսին ներկայացվեցին «Երկրի օր-2012» քարոզարշավի առանցքային ծրագրերը:

Այսօր կայացած համատեղ ասուլիսի ընթացքում «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը եւ «Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի» տնօրեն Ռուբեն Խաչատրյանը ներկայացրեցին «Երկրի օր-2012» քարոզարշավի առանցքային ծրագրերը եւ քարոզարշավի շրջանակում իրականացվող հիմնական միջոցառման՝ ծառատունկի մանրամասները: Այս տարի նախատեսված մեծ ծառատունկը կիրականացվի Արարատի մարզի Ուրցաձոր համայնքում: Այստեղ է գտնվում «Խոսրովի անտառ» պետական արգելոցին կից բուֆերային գոտու այն հատվածը, որի պահպանությունը ստանձնել է «Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը»: «Երկրի օր» քարոզարշավի շրջանակում այդ տարածքի ծառազուրկ հատվածում ապրիլի 22-ին նախատեսվում են անտառատնկման աշխատանքներ իրականացնել:





«Հայաստանը փոքր երկիր է՝ սահմանափակ բնական ռեսուրսներով, եւ այդ սակավաթիվ ռեսուրսների պահպանությունը եւ ճիշտ տնօրինումը երկրի համար կենսական խնդիրներ են: Այդ պատճառով անհրաժեշտ է ընդունել, որ երկարաժամկետ կայուն զարգացմանն ուղղված որոշումների կայացման մեջ այսօրվա թերացումները գալիք տասնամյակներում բացասական ազդեցություն կունենան ապագա սերունդների կյանքի որակի վրա»,- ասաց «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը: «Բնապահպանական գործունեության մեջ կամավորական հիմունքներով ընկերությունների եւ անհատների մասնակցության խրախուսումը բնության հանդեպ խնամքով վերաբերմունք ձեւավորելուն ուղղված առաջին քայլն է: Բնապահպանական կազմակերպությունները եւ կրթական ծրագրերը կարեւոր դեր ունեն տարաբնույթ թիրախային խմբերի շրջանում բնապահպանական խնդիրները վերհանելու, հանրային իրազեկությունը բարձրացնելու, գիտելիքների տարածման եւ բնապահպանական գիտակցությունը խթանելու հարցում: «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը եւ «Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը» համախմբվել են հանուն գալիք սերունդների ապագայի»,- ավելացրեց պարոն Յիրիկյանը:

Ասուլիսի ընթացքում ամփոփվեցին նաեւ «Երկրի օր» քարոզարշավի շրջանակներում հայտարարված «Դիմավորենք թռչուններին» խորագրով 2-րդ՝ կենդանաբանական այգում ձմեռող եւ բնադրող թռչունների մասին պատմող հեքիաթների մրցույթի արդյունքները: Ռուբեն Խաչատրյանն ու Ռալֆ Յիրիկյանը երեք անվանակարգերում հանրակրթական դպրոցի սաներին մրցանակներ հանձնեցին: